ըսել, նա ասում ձեզ. իմ Փրկիչ Յիսուսը կենդանի է, Նա իւր վերայ առաւ իմ մեղքերը և կրեց իմ պատիժը: «Նա մեր մեղքերի համար վիրաւորվեցաւ և մեր անօրէնութեան համար ծեծվեցաւ, մեր խաղաղութեան պատիժը Նորա վերայ եղաւ և Նորա վէրքերով մենք բժշկվեցանք»: (Եսա. ԾԳ. 5):

Այս բանի մէջ Աստուծոյ սէրը մեր վերայ յայտնի եղաւ, որ Աստուած իւր միածին Որդին աշխարհ ուղարկեց, որ Նորա միջոցով ապրենք: Այս բանի մէջ է սէրը, որ չէ թէ մենք սիրեցինք Աստուած, հապա որ Նա մեզ սիրեց և իւր Որդին ուղարկեց մեր մեղքերին քաւութիւն լինելու»: (Ա. Յով. Դ. 9, 10):

«Ողորմութիւնը և ճշմարտութիւնը միմեանց պատահեցան, արդարութիւնը և խաղաղութիւնը միմեանց համբուրեցին»: (Սաղ. ՁԴ. 10):

Եկէ՛ք այժմ Փրկչի մօտ, մօտեցէք Նորան ձեր ամեն բարոյական հիւանդութիւններով, թէ ծածուկ և թէ յայտնի ախտերով և հաւատով բժշկութիւն կգտնէք:

Նա ասաց. «Նա որ ինձ մօտ կգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ»: (Յով. Զ. 37):

Մի անգամ պիտի մաքրվէք և ձեր գործերը մաքրված պիտի լինին, որով ճշմարտութեան Հոգին ձեր մէջ կբնակի:

Ա. Վ.

---

## ԽՐԱԽՈՅՍ ՃՇՄԱՐՏԱՍԷՐԻՆ.

Թող պատրաստէ քեզ տըգէտ ամբոխը,
Թող քեզ անիծէ ու հալածէ նա.
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռիդ
Անահ, աներկիւղ միշտ յառաջ գընա՛:
Թող խաւարամիտ ցածոգի անձինք
Խաղք ու ծանակներ թափեն քո վերայ.
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռիդ
Ճեղքիր խաւարը ու յառաջ գընա՛:
Թող զրպարտեն քեզ սուտ գիտակ մարդիկ,

Թո՛ղ քեզ սրտութեան կանչեն պաշտօնեայ.
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռքիդ
Վեր առ զինակներն ու յառաջ գընա՛։
Թո՛ղ ծուլութիւնը փակէ քեզ բանտում,
Թո՛ղ կաշկանդէ քեզ անողորմ շղթայ.
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռքիդ
Խորտակիր կապանքդ ու յառաջ գնա՛։
Թո՛ղ փշեայ պսակ ծածկեն քո գլուխ
Եւ զանազան տանջեն անխընայ,
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռքիդ
Մինչև անարգ մահ իսկ յառաջ գնա՛։
Որքան ժամանակ քո սուրբ արիւնը
Արծըլի մարդկան սրտերի խորքում
Եւ կըծնանի նոր ազգ՝ նոր սերունդ.
Նա կըպաշտէ քեզ սուրբերի կարգում։

Վ—ղ—ը. Յ—հ. Չ.

# ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԸ.

«Ինձ ասա բարեկամդ ով է, որ ես ասեմ թէ դու ինչ մարդ ես։» Առած։

Չկայ մի ազգ որ կրօն չունենայ. ոչ թէ քաղաքակիրթ ազգերը՝ վայրենի ազգերն անգամ կրօն ունին. թէպէտ ամենայն տեղ մի առանձին գաղափար է եղած գերագոյն էակի վերայ՝ բայց ոչ մի տեղ՝ ոչ մի ազգ՝ եւ ժողովուրդ մինչեւ ցայսօր չէ ժխտած այդ էակի գոյութիւնը. չէ եղել ոչ մի շրջան ընդհանուր պատմութեան մէջ՝ ոչ մի դար անգամ՝ երբ կրօնը դադարած լինէր՝ երբ ազգերն ու ժողովուրդները գերագոյն էակի գաղափարը մերժած լինէին մի որեւիցէ կերպով։

Սակայն հետաքրքրլին այն է՝ թէ ինչպէս է ստեղծում մի ազգ իւր կրօնը՝ ինչով է հաստատուում մի ազգի մէջ այս